

Վ Ի Շ Ա Պ

(Հէքիալթ)

Ժամանակով, հակաների դարում, Հիմալայի բարսում ապրում էր ահեղ վիշապը, որի համբաւը սարսափ էր սփռել ողջ աշխարհի գիւցազների սրտերուն անդամ։ Ոչ միայն նշանաւոր քաջերը չէին յանդգնում նրա դէմ կրօւի դուրս դալու, ոչ միայն հերոսների գնդերը սիրտ չէին անում խմբովին արշաւելու վիշապի բնակավայրը, այլ նրա սահմաններից հառաջելով խոյս էին տալիս թէ գիւցազները և թէ գևերը։ Այս երկիրը շրջապատող լերկ ու սրակող ապառաժները ոչ ոքի անցը չէին տալիս վիշապի իշխանութեան սահմաններին։ Խոտենալու, ոչ մի նաւ նրա գետերի ժայռոտ ափերում նաւամատոյց ու նաւահանգիստ չէր գտնում խաղաղելու, ապրանք տալու, կամ մթերք վերցնելու, ոչ մի կարավան կածան չէր գտնում նրա մութ անտառներից, սիզաւէտ հովիտներից և խորխոր ձորերից անցնելու։ Այս երկրի սրբնթաց գետերը, օձապտոյտ հեղեղատները, ահեղագոչ ջրվէժները և փրփրալի սահմանքները քշում ետ էին դարձնում ծովից բարձրացող նաւակները, լաստերն ու մակոյկները։ Նրա բարձունքից փշող հողմերը, մանչող բամիները սարերի ձողերով մագլող քարայծներին, վիթերին ու նապաստակներին անդամ գլուխում էին անդնդախոր ձորերը, փշուր փշուր անելով անասունների ոսկորներն անդամ։

Այս անմատչելի վիշապի մասին այն դարերի վիպասանները, գուսանները անթիւ առասպելներ են

պատմել, անհամար ու յեղյեղովկ դիւցազներգութիւն-ներ են երգել, նկարագրել, հետաքրքրել և բորբքել են արկածախնդիր հերոսներին, գաղափարական անհա-սանելուն ձգտող անմահ քաջերին։ Այս գուսանները բա-ցատրում էին, որ աշխարհ տարածուող հողմերը սկիզբն են առնում վիշապի եօթը զոյդ ոռնդերից, որոնք տա-րածում են եօթն ուղղութիւնով ողջ երկրի շուրջը զո-վացնելու և հովացնելու տապ արեգի տօթի մէջ տա-պակուածներին։ Քաղցրաշունչ զեփիւոը հողմերի, փո-թորիկների և մըրիկների է փոխարկում, ինքը վիշապը բարձրանում է ամպերի գաղաթներին, եթէ նա կատա-գում, բորբոքում, ահեղագօշ որոտներով, փայլակներով ու կայծակներով այրում, մըկում է պատահածներին, մին-չև սրտմտութիւնը մեղմում է, թուլանում է նրա բար-կութիւնը։

Այդ գուսանները թւում էին վիշապի եօթը գլուխ-ները, եօթը զոյդ հրացայտ ացերով և ամեն գլխի վրայ եօթնական ահեղ բերաններով։ Խնչպէս նկարագրում էին, նրացուկներից բղխում էին սառնորակ, ականա-կիտ, անսապակ, անուշ աղբիւրներ, որոնք սահում, գը-լորում էին ջրվէժների նման խորխոր ձորերը անվերջ խոխոջիւններով, յագեցնում, թարմացնում էին կինդա-նական և բուսական աշխարհը։ Վիշապի շրթունքներից հոսում էր կաթը, կովի տողած ցուրի պտուկներից ցայ-տող շիմերի նման, որով դիւցնում ու մնուցանում էր այդ աշխարհի թօծիւնն ու կորիւնը, կողոն ու խոչկորը, հորթն ու քուրակը, ուն ու գառը, մանուկն ու ծերու-կը և կաթի առատութիւնից մըզուած կարագով ու իւ-զով զեղուած էր ողջ երկերը։ Նրա դնչերից ծորում, ապառաժի նման լերկ կղակից, կրծքից կաթիլ կաթիլ գլորում, իջնում էր հովիտներն ու ձորերը ցողանման սպիտակ, սաթի նման դեղին ու փայլուն մեղքը, որը յագեցնում էր անկուշ գաղաններին էլ, մարդերին էլ և քաղցրացնում էր ահաւոր գետերի, անհամար լճակ-ների վճիտ ջրերը։

Նրա պուօչներից զեղալի սահում էր նեկտարը և փրփրալի թափւում, ինչպէս հնձանի խողովակից՝ գուրս էր վիժում կենդանաբար. կարմիր գինին և զուարթացնում, բոցավառում էր թորշումած այտերն, արագացնում չորացած ջղերի արիւնի շարժումները և հանգած սրտերի տրոփիւններն անդամ։ Լեռնադադաթի նման կոնաձեւ ցցուած շնաձեւ կղակների երախից ժայթքում էր բոցավառ. կուալրը, որից բարձրացած ծուխը գնում միաւորւում էր ամպերին, իսկ բոցավայլ կուալրի կաթիլները անձրեսի նման շաղ էին գալիս երկրի վրայ, իմանձում, դաղում էին այդ աշխարհի անսովոր բոյս ու կենդանութիւն։ Ապառաժների լանջերի ու ստորոտների պատառուածներից ցած գլորուող ջրերի նման, նրա պնչերի ճեղքերից գուրս էր շպրտում նաւթը, որից բարձրացած և օդի մէջ կուտակուած գաղերը կուպրի բոցերին ընդհարուելով, զարհուրելի որոտներով այրուում և զարհուրեցնում էին կենդանական աշխարհը։ Հրաբխաձեւ մռութներից շատրուանի նման դէպի երկինք էր ժայթքում ծծումբ ու շիկացած նիւթեր, որոնք բռլորաձեւ երկրի վրայ անդրադառնարվ այրում, բարացնում էին պատահական ամէն կեանք։

Միայն ընիկները վարժուել էին այս երկրի օդին ու ջրին, սոսկալի կրակներին, կուպրի անձրեններին, զարհուրելի գաղերին։ Նրանց համար այդ բոլոր պատահարները սօվորական էին, երկիւղ չէին պատճառում և այդ ամէնը իրենց համար երկնային ողորմութիւն, պարզ էին ընդունում։ Այդ երկրի աղդաբնակութեան աստուածը, արարիչը, կենսատուն, հրէշն ու հոգէառը, պահապան ու պատտողը Վիշապն էր, նրան էին պաշտում, նրա պատգամներն էին լսում, նրա հրամաններին հպատակուում և նրան օրհնաբանում էին։ Եւ գոհ էին իրենց վիճակից այդ կիսավայրենի, կիսաքաղաքակիրթները։

Վիշապի հայրենիքի բար ու բերերի առասպելա-

կան առատութիւնը և հրաշալիքները որքան որ բորբոքում էր շրջակայ աղգերի նախանձը, որքան որ գրաւում էր նրանց սիրում, ուշը, հրապարում նրանց հոգին, նոյնքան էլ այդ երկրի սարսափները՝ այրած կուպրի անձրեց, նաւթի գաղից առաջացած բոցային հեղեղները, երկնքում ամպանման արեկ լոյսը բռնող ծծումքի և շիկացած ժայռի կտորների բոցերը, կայծերն ու ծուխը և գրանց կարկուտի նման երկրի վրայ թափուկլը, սասաննեցրել էր չարաչք գրացիներին, որոնց գիտնականներն ու մեծամեծները երգում էին առել իրենց հաղատակներից և օրէնք էին գրել, երբէք որևէ է երթևեկութիւն անգամ չունենալ, չը կատարել վիշապի սահմաններում, կրակով այրել ողջ ողջ այն անձինքներին, որոնք յանդգնէին ժողովուրդը վիշապի դէմ պատերազմի գրգռելու, նրա երկիրը գրաւելու համար Այդ օրէնսդիրները իրենց այս պատգամները դրժողների դէմ անէծք էին կարդացել և նզովքներ սահմանել.

Բայց աշխարհում արգելուածից հրապուրիչ, անհնարինը հնարաւուելու մոքից աւելի դիւթիչ, անյայտը ըմբռնելու մտածութիւնից աւելի դրաւիչ, անծանօթը անձամբ տեսնելու տենչից աւելի ըղձալի, գաղափարի ետևից ձգտուելուց աւելի հաճելի, նպատակին համնելու կոուից գուրեկան և իդէալի համար զոհուելուց աւելի վսեմ ինչ բան կարող է լինել. Միթէ կարելի է արձանի նման լսել գուսաններին և վիպասաններին, նրանց երգերն ու վէպերը և կաշկանդել մարդկային մաքերը, որ չը խորհեն, չը խուսին վիշապի երկրի ու նրա հրաշալիքների առասպելական աշխարհը:

Դարեր դարերի ետևից սահում էին, բաջեր քաջերի ետևից գլորւում էին վիշապի պետութեան խոր խոր ձորերի և անդաւնդների մէջ, մոխեր կամ ապառաժ դառնում, հերօսների նաւերը նաւթի ու կուպրի լճակներում սուլուում էին, այրուում: Դիւցազների արշաւանքները թէե խորվում էին վիշապի անդորրութիւնը, բայց

այդ երկիրը մտնողները էլ չեին վերադառնում։ Եթէ յաջողւում էր հերոսներին, դիւցազներին քաջութեամբ կոււել վիշապի հետ, կտրել նրա գլուխներից մէկը, սրա փոխարէն խակոյն եօթը դլուի էին բարձրանում և կլանում բոլոր թշնամի բանակները։ Արշաւագնդերի կորուստը որքան որ զարհուրելի էր վերջանում, այն քան բորբոքւում էր Վիշապին ընկճելու տենչանքը։ Ինչքան քստմելի կոտորածներով և տանջանցներով կուլ էին գնում խիզախ մարդիկները, այնքան աւելի յուղւում, հրապուրւում էին հերոսների հոգիները, որոնք դարերի ընթացքում նորանոր ծրագիրներ կազմելով, դիւտական մեքենաներ հնարելով և ճիւաղային զէնքերով սպառազինուած, մահն աչքերն առած գնում էին հետեւելու իրենց նախորդներին և թաղուել նրանց սակորների մօտ։ Ժամանակի շրջանը պարբերաբար գունդագունդ զոհեր էր բերում Վիշապին, որ առանց սահմանից գուրս գալու կլանում էր, կլանում առանց յաւգենալու առանց դժուարանալու։

Եթէ պատահում էին դէպքեր, որ այս յարձակուող խմբերը կարողանում էին մտնել Վիշապի սահմանները, ընակութիւն հաստատել, կարճ միջոցում կամ զոհ էին գնում երկրի բնական արհաւերքներին, և կամ կուլ էին գնում բնիկներից ու տարրալուծւում։ Եւ բիւրաւոր ու միլիոնաւոր հզօրները, հուժկուները դարերի ընթացքում հնարք չը գտան վիշապին նուածելու, նրա ոյժը կաշկանդելու, նրա ոգին ընկճելու և նրա երկիրը տիւրապետելու։

Ինչպէս Վիշապի երկիրը, նոյնպէս և ինքը՝ Վիշապը կոյս էին մնացել դարեր ու գարեր։ Նրա խելքը, միուրը կենդրօնացած էր իւր ապառաժի սահմանները հօվանաւորելու և պահպանելու վրայ, նրա տենչանքը իրեն վրայ յարձակողներին ջախջախելն էր, նրա համար իւր տիրապետութիւնից գուրս էլ ուրիշ աշխարհ գոյութիւն չունէր։ Նրա ամբողջ իղձն ու իդեալը իւր հովա-

նիրի տակ ապաստանածների բարեկեցութիւնն էր։ Խնքը՝
Վիշապը ոչ կարիք ունէր, ոչ էլ կարօտ էր որևէ առար-
կայի. իրենից բղխած բարիքով լիացնում էր ամբողջ
աշխարհ։

Այդ ժամանակները ամբողջ Ասիային տիրել և հրա-
մայում էր Բողդիխանը, որին երկրպագում էին Խաղա-
ղականից մինչև պարսից ծոցը, Սառուցեալ Ովկիանից
մինչև Հնդկականի ափերը ապրող բոլոր ազգերն ու յե-
ղերը, Ասիայի մի ծայրից մինչև միւսը՝ լայնքսին թէ
երկանքսին, բոլոր ցեղերը խունկ էին ծխում, զմուռ
էին բուրում Բողդիխանածնի արձանների առաջ, որի
պատղամները, որպէս երկնային պատուիրան սասանե-
ցնում էին իշխանապեմներին, թագաւորներին անդամ։
Միայն Հիմալայի բարձունքում ապրող Վիշապը և նրա
հովանու տակ ապաստանողները իրենց համանման հո-
ղածինին աստուածորդի դաւանելու չէին դատապար-
տուած և չէին ստիպուած երկրպագել այդ մահկանա-
ցաւների անդրիներին, ինկարկելով Բողդիխանածնի պատ-
կերները։

Այս հարիւրաւոր միլիոններով մարդերից երկրպա-
գուած Բողդիխանածինը թշուառ, աշխարհի կինարմատ-
ներից ամենաանբաղդ մայրն էր, որովհետեւ այնքան գո-
րով էր տածում դէպի իւր միակ զաւակը, որ իսկապէս գե-
րի էր դարձել, ստրկացել էր այդ գեռահաս մի-
նուճար որդու՝ Բողդիխանի քմահաճոյքներին։ Դիշեր
ցերեկ այդ թշուառ մօր ուղեղը ամբողջապէս զբաղուած

էր իւր այդ զաւակի ապագայով, որ նրան հասցնէ իւ-
մաստութեան, ճոխութեան և փառքի այն կէտին, ուր
հասնելու ձգտել, երազել են միայն նրա նախորդները։

Բողդիխանածինը այնքան գեղանի, այնքան սքան-
չելի, այնպիսէ դիւթիչ կազմուածք ունէր, այնպիսի՝
հեղ և հրապուրիչ աշեր, այնպիսի նրբին քիթ ու քնքոյշ
շրթունքներ, ծնօտ ու կզակ, բարձր վիզ, լայն ուսեր,
վարդիթերի նման ողորկ ու ցոլուն մորթ, որ առաջին

հայեացքով դերմարդկային, հրեշտակային, երկնային գոյութիւն էր թւում ամեն մի մահկանացուի աչքերին և նրա քնքոյշ հագուստն ու կապուատը, նրա մազերի խոսպապիկների, հիւսուածքի դասաւորանքի արգն ու ղարզքը, նորա նազենի շարժուածքը, ժպիտը, դրաւիչ ձայնը, աչքերի թերթուածքը, հայեացքի սլաքները և շրջունքի հպումը հպատակեցնում էին դազանային աչքերը, խոնարհեցնում էին վայրենի զլուխները, պապանձեցնում էին անսանձ լեզուները, բարախեցնում էին գրանխաեայ սրտերը, հառաչեցնում էին խեցեղէն հոգիները, մագնիսացնում էին եղեգնեայ ջղերը և հրապուրում, լացացնում էին ապառաժներին անգամ:

Բողդիխանածնի միածին զաւակը, որին երկրպատգում էին համանման դէմքով եօթը հարիւր միլիոն մարդ, իւր մատաղ հասակում տասնեւսօթերորդ տարում, թոքախտով էր վաշակուել խօթացել էր, երկրի — Ասիայի ամեն կողմից բժիշկներ էին հրաւիրուել, որ դարմանեն, աղատեն զարհուրելի մահի ճիրաններից այդ աստուածորդուն, բայց ճար չէին դտնում, գեղ չէին իմանում, յուսահատ վերադառնում էին իրենց ծննդավայրը, որ Բողդիխանածնի վշտին ականատես և բարկութեան զոհ չը դառնան: Թէև ամեն օր զանազան աշխարհներից հարիւրաւոր բժիշկներ էին վարում դործակալները դէպի մայրաքաղաք, բայց օգնութիւն դլանելուց յուսահատուել էր թշուառ մայրը:

Որպէսզի որդու գահը ապահովէ, Բողդիխանածինը պետութեան զէկը ձեռք առնելու պէս կոտորել էր տուել աստուածորդու զարմի բոլոր արու և էգ անդամաներին, մնացել էին կենդանի միայն ինքն ու որդին չիւանդ զաւակին արգելում էին ամուսնացնել, իսկ անժառածանդ որդուն եթէ մահը գրկէր, պետութեանը կործանում էր ապառնում: Այն ինչ կրօնական օրէնքնեալը արգելում էին Բողդիխանածնին կրկին ամուսնանաւու, նորից զաւակ ունենալու մտածութեան համար:

անդամ կարող էին անդգայ մանդարինները իրենց քաշասիրտ դատողութեամբ նրան մահուան դատապարտել։ Թշուառ մայրը այնքան էր սիրում իւր միածնին, այնքան էր գրաւուած զաւակովը, որ քիչ էր մնում սոսկաւ լի վշտից ինքն էլ որդու ախտին տիրանարա իսկ մանուկ զաւակի թոքերը օրից օր նուազում էին, օրից օր թուանում, մաշտում։

Մի օր մի բաղդախնդիր Հելլէն բժիշկ ահաւոր ճանապարհորդութիւնից յետոյ, եկաւ մտաւ Զինական արքունիք, զննեց հիւանդին, հարց ու փորձեր արտաւ և խորհուրդ տուեց, որ Բողդիխանին փրկելու համար, ուխտի տանեն նրան Վիշապի բարձրաւանդակը, հնար գտնել հիւանդը սնուցանել այդ հրէշի շրթներից հոսած կաթով և գնչերից ծորած մեղրով։ Այդ երկրի ճակներում լողացնել, այնտեղի անտառներում շրջեցնել, որ Բողդիխանը աղաւուի խօթութիւնից։

— Բացի այս ուրիշ հնար չը կայ, ասաց էսկուլաւոլի աշակերտը Բողդիխանածնի ներկայութեան և սառանասիրտ դուրս եկաւ։

Նախարարները, մանդարինները ժողով արին, բայց միջոց չը գտան, թէ ինչպէս Բողդիխանին ուղարկեն այդ զարհուրելի և վտանգաւոր լեռները։ Վշտաբեկ մայրը ետ կանչել տուեց Հելլէն բժշկին և ասաց։

— Մեծ լոխման, ինչպէս միածնիս փրկութեանը գեղ ցոյց տուիր, նոյնպէս հնար գտիր, թէ ինչպէս կարողանամ այդ երկիրը մտցնել զաւակս, որտեղ անդրւագ վիշապի շնչից արտավիժած կրակի բոցերից ամեն լոպէ վտանդի կարող է ենթարկուել աշխարհի երկրպագութեան կենդրուակը։

— Բողդիխանածնը թող շատ ապրի, ասաց բժիշկը, այդ երկիրը անմատչելի է քաջամարտիկներին, բայց ձեր հայեացքի առաջ ոչ միայն կը խօնարհի, կը հպատակուի, կը ստրկանայ անյաղթելի, աննուած վիշապը, այլ նա ձեր տեսքից դիւթուած, ձեր սիրտը դրաւելու,

իւր ներքին հուրը հովացնելու համար, կը հանդչեցնէ, արտավիժած կուպրի, նաւթի ու ծծումբի հեղեղները, կերկրպագէ ձեզ, կը խոնարհի մինչև ձեր ստքերը:

—Անդամ խաւարածին, պապանձուիր, ասաց Բողդիխանածինը, առաջարկդ ոչ միայն անազնիւ, այլ մինչև անդամ սրբապիղծ է, որի համար սրբաղան պարտք եմ զում քեզ ողջ ողջ այրել տալու: Փուչ կենդանի, ինչպէս յանդգնեց-սր Բողդիխանածնի կուսութեան, անմեղութեան գէմ այդպիսի յանցանը մտածել, մանաւանդ թէ յայտնել...:

—Ո՞վ բողդիխանածին, ներիր մահապարտիս, քանի որ յանդգնեցայ ականջներդ յօւզել գարշելի ձայնովս, մեղսալի բառերովս հաղար անդամ ներողութիւն եմ հայցում մահացու մեղքիս համար: Բայց համարձակւում եմ դարձեալ աղերսել, որ բարեհաճէք ձեր հայեացըը չը դարձնել ինձնից. մի քանի րոպէ ևս ձեր լսելիքը ուրել և ուղղել ձայնիս հոսանքին լսելու պաղատանքս, որը ոչ թէ կեանքս փրկելու, այլ մատաղահաս զաւակիդ թոքերը բուժելու, նպատակիդ հասցնելու համար եմ շատախօսելու: Թող իղծս կատարուի, առողջանայ բողդիխանը, վիրապի սիրագ. թող ցրուի, փարատի ցաւդ, վիշտ, դէմքիդ վրայ բուն դրած թախիծը, ով բողդիխանածին, և դադարի այդ քնքոյշ շրթունքներիցդ կիզիչ հառաջանքները, ես կը հասնեմ փափագիս, մինչև անդամ եթէ այս սրահից դուրս չեկած դատապարտես, որ աչքերս կապոյտ երկինքը դիտելուց և թքերս անապակ օդը ծծելուց իսպառ դադարին:

—Մայրական սէրս, դէպի տենչալի նպատակիս վեհ գաղափարները ցատկող սիրոս ստիպում են, որ ականջս ուղղեմ զազիր զրդոցիդ: Ասմ, բայց կարճ ու հակիրճ:

—Ո՞վ բողդիխանածին, երկրպագում եմ քեզ հուգուս խորքերից ծնկաշոք և աղերսում, որ գաւակիդ փրկելու, տենչանքիդ հասնելու համար, զիչիր զննէ լոկ ժպտալ, մի միայն քաղցր հայեացք ուղղել վիշտապին:

Զեւցրէք, թէ անտարբեր չէք դէպի նրա վառ զգաւ շումները։

— Լոկիր, խաւարածին, պապանձուիր, սևահոգի, Բողդիխանածինը չի կարող երբէք կեղծել... Տարէք, բանտ գլորեցէք այս ճիւաղին, ասաց բորբոքուած և վշտաբեկ մայրը դարձաւ առանձնարանը։

Հէլլէն բժշկին թէև վակեցին զնդանում, բայց շուտով խորհրդաւոր հրաման ստացան, որ նրա վրայ յատուկ խնամք տանեն։ Հէլլէնը զգաց, որ հասել էր նպատակին և Բողդիխանածինը պիտի գործադրէ իւր ծրագիրը։ Թշուառ մայրը շատ մտածեց, անշափ հառաւ չեց, արտասուեց և աղիողորմ ողբաց, բայց անճարաց ժողովի հրաւիրեց նախարարներին, փոխարքաներին, խօրհրդական մանդարիններին և նրանց յայտնեց բժշկի ծրագիրը։

Թէև մանդարիններից ոմանք խորհուրդ տուին, որ այդ բաղդախնդիր Հէլլէնին չը լսեն, վտանգի չենթարկեն մօր պատիւը, բողդիխանին, բայց նկատելով բողդիխանածնի բժշկի առաջարկութեան կողմը հակուիլը, չը համարձակուեցան պնդել իրենց կարծիքի վրայ։ Եղան այն պիսի ժողովականներ, որոնք մինչև անդամ կասկածեցան ինքնակոչ խորհրդական բժշկի գուշակութիւնների վրայ. բայց խնդիրն այնքան փափուկ էր, պատասխանատութիւնը այնքան ծանրակշիռ, որ իրենց համոզումները չը փաստաբանեցին։ Թէր և դէմ վիճելուց յետոյ, բողդիխանը առողջացնելու, ցեղը փրկելու և իրենց դիրքը, պաշտօնները ամրացնելու համար, ղիջան, համաձայնեցան միջոցների մէջ խարութիւն չը դնելու և որոշեցին, որ Բողդիխանը ուխտի զնայ վիշապի երկիրը և վերջինից խնդրեն, եթէ մերժէ՝ ստիպեն, որ նա իւր կաթով, կարագով, մեղրով ու նեկտարով սնուցանէ ու բուժէ իրենց աստուածորդուն։

Բողդիխանածինը զանազան նուէրներ պատրաստել տուեց, պատգամաւորների հետ ուղարկեց վիշապին

և ասաց, որ նրան հաղորդեն, թէ ինքը բացի բարեկամական անկեղծ սէրը, ոչ մի ուրիշ նպատակ չունի և խնդրում է, որ վիշապը հաճի նորան իւր զաւակի հետ՝ որպէս ուխտաւորների, հիւր ընդունել։ Պատուիրեց, որ յայտնեն, թէ իւր մանուկ զաւակը հիւանդ է, զիտնականները և բժիշկները խորհուրդ են տուել ուխտի գնալ և վիշապի երկրի օդով, ջրով, կաթնով, մեղրով, նեկտարով ու բարիսվ նրան մնուցանել, որ բժշկուի։

Աշխարհի սկզբից մինչև այդ ժամանակ միայն զինուած, զրահաւորուած հետի և հեծելազօր գնդեր էին մտել վիշապի երկիրը և սկսել կոտորել, կողոպտել, աւերել, արիւն թափել և առագ տարածել, մինչև վիշապի և նրա ապառաժների հետ բախուիլը, ջախջախուիլը և ջարգուիլը։ Իսկ սրանց համեստ և խոնարհ երեսոյթից վիշապը մնաց շուարած, մանաւանդ որ խնդրակները հեղահոգու տարազ էին հագել և նուէրներով էին ներակյացել։ Անչափ հրապուրեց վիշապին Բողդիխանածնի այցել նպատակը, որի անասելի գեղի և անպատմելի քննչութեան համբաւը վազ էր լսել։ Գեղանիների նըկարագրութիւնները շատ էր լսել, երիտասարդական սիրոյ մասին շատ բան էին պատմել, բայց վիշապը սիրոյ գաղափարը չէր կարողացել իւրացնել։ Նա կոյս էր եղել և սուրբ էր ապրել դարերով։ Բայց այս այցը այնարան հետաքրքրեց նրան, որ անմիջապէս զանազան նուէրներ տուեց պատգամաւորներին, ընդունելով Բողդիխանածնի առաջարկը և վերադարձրեց։ Եետոյ խնդրակներ ուղարկեց, որ գնան հրաւէր կարդան ախտաւոր Բողդիխանածնին և ուխտաւոր բողդիխանածնին։

Այս անակնկալ մարդասէր հրաւէրը կասկածներ յարուցեց Բողդիխանածնի և նրա խորհրդականների սըրատում, որոնկ երկիւղ էին կրում, ենթադրելով թէ մի գուցէ կանխապէս Հէլլէն բժիշկը վիշապի հետ դաւ պատրաստած լինեն։ Դորա համար իսկոյն զնդանից հանել տուին բժշկին, ներկայացրին խորհրդին, ուր Բողդիխանածնը ասաց.

— Խաւարածին, երգուում եմ Բողդիխանի նոտիրաւ կան դվասվ, որ եթէ որևէ է դաւաճանութիւն բացուի, քեզ կը դատապարտեմ յաւիտենական տանջանքին Ասա, ինչից ստիպուած ոչ միայն սիրով ընդունեց մեր առաջարկը վիշապը, այլ մինչև անդամ պատուիրակներ ուղարկեց մեր ետեկից:

— Բողդիխանածինը շատ ապրի, պատասխանեց բժիշկը, եթէ թոյլ կը տաք և կը հաճիք ինձ լսել, համարձակուում եմ յայտնել, որ վիշապը արդէն գտնուում է ձեր ուռկանում: Այժմ նազանի ժպիտով, քաղցր խօսքերով կարող էք նրան ստրկացնել:

— Անդունդը, դժոխային սառնամանքի անդունդը գլորել կը տամ քեզ, խաւարածին, եթէ դաւաճանես եթէ խորհուրդներդ ինձ խարեն, յոյսերդ երեսները շուռ տան, յաւիտենական տանջանքի կը դատապարտուես, առանց Գրողի երեսը տեսնելու:

— Մահը, աանջանքը նշանակութիւն չունին, գերեր ջանկուհիդ. ես առանց տրտունջի պատրաստ եմ այդ բոլորը տանել այսօր իսկ: Բայց եթէ իրականանան գուշակութիւններս:

— Քեզ կը բարձրացնեմ խորհրդականներիս դասը,

խաւարածին:

— Միայն խորհրդականներիդ, նախարարներիդ շարքը, մրմնջաց Հէլէն բժիշկը հեռացող արքայամօր ետեւ լից, յետոյ դանդաղութեամբ ետ դարձաւ, հառաչեց ու դիմեց իւր զնդանը:

Բողդիխանածինը հրաման տուեց, որ շուտով պատրաստեն կառքերը, վրանները, բեռնակիր երիվարները, ջորիները, գրաստներն ու ուղտերը, ապրանքատար սայլերն ու պատգարակները, Ամբողջ ամիս նա պատրաստել էր տալիս այն նուէլները, որոնք հասցնելու էր վիշապին և նրա ճետերին: Երբ ամեն բան կարգին էր, պատգամներից ժամանակ հարցրին, բարեյաջող բոպէին նստան դեսպակները, սենեկապանուհիները, աղախին-

ները յատուկ ջարդեահները տեղաւորուեցան, խորհրդականները, նախարարները առանձին առանձին կառքեր բազմեցան, ճանապարհեցին դէպի արևմուտք՝ վիշապի բնակավայրը։ Կալանաւոր Հէլլէն բժշկի համար յատուկ պատգարակ էին պատրաստել և հետեւում էր կարավանին, թէե դեռ պաշտօնապէս չէր մտել պաշտօնականների, պալատական խորհրդականների դասը։

Երկու ամիս յետոյ կարավանը մօտեցաւ վիշապի իշխանութեան սահմաններին, որտեղից Բողդիխանածնի կարապետը վիշապի իննդրակիներից մէկի հետ առաջ անցան հիւրերի գալուստը աւետելու։ Վիշապն անհուն ուրախութիւնով լցուած հարազատներին ընդառաջ ուղարկեց ուխտաւորներին գիմաւորելու։ Ահաւոր բազմութիւնը մեծ շըով, անհուն հրճուանքով, թափօրներով, ծնծղաներով, երգիներով, կաքավիներով, սրինդներով և յատուկ աւետաւոր մունեաիկներով երկիր մըտան Բողդիխանածնը իւր զաւակի հետ, բարձրացան ձորերից դէպի սարահարթը, բարձր լեռներից մէկի լանջին, վիշապի բնակավայրի դէմուդէմ վրանները կանգնեցրին։

Բողդիխանածնը բերած անհաշիւ նուէլիներով, բողդիխանի, նախարարների և խորհրդականների հետ ներկայացաւ վիշապին մեծ երկիւլով, խոնարհեցան, երկրպագեցին, համբուրեցին նրա ստքի կոխան բարելն ու ապառաժները, ներկայացրին ընծաները, կատարեցին ուխտեր, բաղցը աղերսանքներ և զրոյցներ տեղի ունեցան, կաթնով, կարագով, մեղրով ու նեկտարով մեծարուեցան, կազզուրով, մաղուրով ու նեկտարուկ մերը հանգստանալու։ Այստեղ ձորերում որսուած եղջերուի, շամբերում սպանուած կնճի մսերից առատ խորովածներ ու տապակուածներ էին պատրաստել, կարմրախայտ և գեղարքունի էին խաշել, որոնք մեծ ախործակով կերան, ստամոքսները բեռնաւորած ընկան թմրեցան, երբ արթնացան, այնքան սոված էին, որ իսկոյն կաթ ու

կարագ, մեղք ու խորոված պահանջեցին: Այնքան կօւշտու կուռ ուտելուց յետոյ, երբ խմում էին սառնորակ ջրերը, խկոյն ախորժակները բացւում, քաղց էին դդում:

Եյսպէս շարունակեցին ամբողջ մի ամիս: Ուտում, խմում, քնում, սթափում, դարձեալ պահանջում էին: Արդէն զգալի կերպով ուժեղացան, թարմացան կազմուրուեցան, ոչ միայն առողջները, այլ նկատելի աստիճան կայտառացաւ նոյնպէս հիւանդը՝ Բողդիսանը: Աշխարհի երկրպագութեան սոյն կենդրունակի այսպէս շուտ և արագ ապաքինումը անչափ ցնծման ու հրճուանագի առիթ դարձաւ ուխտաւորներին, մանաւանդ մօր սրտի համար:

Բայց այս հրճուանքն, ուրախութիւնը աժան չը նըստեց, Բողդիսանածնի ներքին ցաւի ու վշտի առարկայ դարձաւ վիշապի նրա վրայ ուղղած հայեացքները, աբակած հառաչանքները, վիշապը, որ կեանքում սիրոյ մասին գաղափար չէր ունեցել, կրակուել, ամբողջ մարմնով զգացուն էր դարձել: Նրա հոգու աչքերը բացուել էին, սթափուել էր դարեւոր մռայլուած վիճակից, անտարբեր չէր կարողացել տանել Բողդիսանածնի ժպիտները, ակնարկներն ու նաղանքը: Մտերմական յարաբերութիւնը կամաց կամաց համակրութեան ու անզուսպ սիրոյ էր փոխարկուել: Օրից օր բորբոքում էին վիշապի կրքերը, նա կուրացել էր Բողդիսանածնի հայեացքների սլաքներից, ամբողջապէս նուիրուել էր կոյր հրապուրանքներին:

Բողդիսանածինը, որ համաձայն Հելէն բժշկի թեւլադբաւթեան և յորդուներին, պարտաւորուել էր, միշտ ժպիտով, գուաւիչ խօսքերով և նաղանի հայեացքով դիմաւորել հիւրընկալին, միակ զաւակի ապաքինելու սիրուն և նպատակին հասնելու տենչանքով, կանխազգում էր, որ կարող էր զարհուրելի փոթորկի առիթ դառնալ և վտանգել ոչ միայն իւր գլուխը, այլ նոյն իսկ անփոխարինելի զաւակը, ցեղն ու պետութիւնը: Թշուառ-

մայրը անճարացած խաղում էր այդ գերը, կեղծում էր, զսպում էր կրքերը, սրոնք նրան յուսահատեցնելու աստիճան ճնշել էին: Նա վարպետորէն շիկնում էր, խնդում էր, ժպտում, ծիծաղում, մինչև իսկ սիրախօսում, խրախուսում վիշապի սէրը, սրան խրում էր կոյր կրքի ովկիանը, բաղդի անուին յանձնելով ապագան: Սիւրոյ խաղն այնտեղ հասաւ, որ մի օր վիշապը յարմար բողէին թեր պարզեց, ուզեց գրկել համբուրել Բողդի խանածնին, բայց խաւարածին բժշկի անակնկալ այցը աղատեց արքայամօրը այդ անել վիճակից: Վիշապը զայրութից այնպէս գրգռուեց, այնպէս քրտնեց, այնքան գոլորշիներ բարձրացան նրանից, որ իսկայն մշուշով պատեցին ծորերն ու լեռնալանջերը, որ էլ անհնար էր իրար տեսնելը և հիւրերը ձեռք ձեռքի տուած ոլոր մուլու ճանապարհներով իջան և հազիւ կարողացան դժոնել իրենց վրանները:

Նախարարների խորհուրդը ճանձրանալով այդ վայրենի վայրերից և նկատելով Բողդիխանի կաղդուրումը, առաջարկեց վերադառնալ մայրաքաղաք, ուր գիտութեան ներքին ու արտաքին գործերը նրանց էին սպասում: Բողդիխանածինը անշափ փափագում էր ժամ առաջ հեռանալ այդ վտանգալի վայրից, իսկ Բողդի խանը յամառած չէր ուզում թողնել այն հողն ու ջուրը, շերքն ու բարին, սրոնք իրեն աղատել էին մահուան ճիւղային ժանիքներից: Երբ աւագանին մոլորած հնար չէր գոնում աստուածորդուն համոզելու մայրաքաղաք վերադառնալու համար, Բողդիխանածինը ժողովի կանչեց խաւարածնին և նրա խորհուրդը հարցրեց: Հելլէն բժիշկը բոլոր պարագաները լսելուց յետոյ առաց,

— Ո՞վ Բողդիխանածին, միթէ պարզ չէ, որ Աստուած է խօսում իր որդու բերանով և սրա կամքն ու հրամանը սուրբ է բոլորիս համար: Միթէ չէք լսել, որ աշխարհային ահաւոր ոյժերը, բարբարոսների արշաւա-

խմբերը, հերոսները, քաջերը, դիւցալներն ու աւարա-
ռուները, Ալէքսանդրի բանակները, Հոռմի Լէգէոնները
Երեց զէնքերով, մեքենաներով և հասրագիտութիւննե-
րով չն կարողացել նուաճել այս լեռները, չեն համար-
ձակուել անցնել այս սարերից, մտնել այս երկիրը։ Ներս
մտնողներն էլ շուտով կսուլ են գնացել, կամ փախել
են ահաւոր զոհերով և կամ ստրկացել են բնիկներին։
Առանց որևէ կորուստի, առանց տանջանքի, առանց դո-
հոգութեան ընկաւ այս երկիրը ձեր ստրի տաք և դուք
այժմ ուղում էք թողնել, հեռանալ։ Միթէ այս պահ-
չելի խրամները, ձորերը, հովիտները, դաշտերն ու սա-
րահաթները, անտառներն ու այգեստանները ձեզ չեն-
հրապուրում։ Միթէ այս անբաւ բերքերը, պէս-պէս ու
անչափ որսերը, անմահական ջրերը, կենդանարար օդը,
կենսատու նեկտարը չեն դրզում ձեր նախանձը, Եթէ
մայրաքաղաքում (տէր մի արասցէ) Բողդիխանը նորից
հազի, բարակացաւի մատնուի, իսկ վիշապը չը ցանկայ-
կրին անգամ ձեզ հիւրընկալել, ումն էք դիմելու, որ
աստուածորդուն րժշկէ։ Այդ ինչ խորհուրդ է, որ ձեր
ձեռքն ընկածը, ձեր կամքովը ուղում էք ետ դարձնել։
Այն էլ աշխարհի մի այսպիսի կտորը, որտեղի օդն ու
ջուրը այսպիսի հրաշքներ են կատարում, թոքեր են
վերակենդանացնում։

— Բայց մի մոռանալ, օտարական, որ մենք հիւր
մտանք այս երկիրը, ասաց մի մանդարին, ինչ օրէնքով՝
գրաւենք մեր հիւրընկալ գոյրը։ Զէ որ այդպիով ըն-
թացը հակառակ է երկնային պատգամներին։

— Մարդիկ աշխարհում ամեն տեղ հիւր են, ասաց
Ժպտալով խաւարածինը։ իսկ այդ հիւրերը գրաւել,
վայելում են աշխարհից որբան տեղ որ կարողացել են
իւրացնել։ Այսօր մեր իշխանութեան տակն է ամբողջ
Ասիան։ Ոչ ոք բնական օրէնքը ընթացքը չի կարող կըտ-
րել, իսկ գրաւածից ոչ ոք չէ ձեռք քաշել տիեզերքի-
ոյութեան ընթացքում։ Մանաւանդ այսպիսի ճովին,

առողջարար և հրաշալի երկրից ձեռք քաշելը ապուշութիւն կարող են համարել մեր ժառանգները և նախատել իրենց նախորդներին, Զինական երկրի ծիւրած ու թուումած զինուորականներին եթէ եօթը տարին մի անդամ այս երկիրը օդափոխութեան ուղարկենք, եթէ մեր զինուորների գնդերը տարին մի քանի ամիս այստեղ բնակուեն, նրանց ոյժի առաջ կը խոնարհի աշխարհը:

Այս բացատրութեան վրայ լռեցին նախարարները և խորհրդականները, գունատուեց Բողդիխանածինը և անշշուկ ամէնքը ընկղզեցին խոր մտածութիւնների մէջ: Քիչ յետոյ գարձեալ մի մանդարին խղեց այդ լուսութիւնը և ասաց.

— Բայց մեր երկիրը, ժողովուրդը առանց պետի և կառավարիչների, կարող է շփոթութիւնների և աւերածութիւնների մատնուել: Նախարարների և Բողդիխանի գարձը անհրաժեշտ է:

— Այդ բոլորովին տարբեր խնդիր է, ասաց խաւարածինը, Դուք բոլորդ Բողդիխանի հետ կերթաք, իսկ Բողդիխանածինը մի քանի խորհրդականների հետ կը մնայ, որ այստեղ հաստատէ իշխանութիւնը, զօրանոցներ շինէ, ամրոցներ ու բերդեր հաստատէ, ամրացնէ, նուաճէ սարերն ու ձորերը, գրաւէ այգիներն ու անտառները, ստրկացնէ բնիկներին: Երբ այդ բոլորը կատարէ, այն ժամանտկ Բողդիխանը երբ ցանկայ, կը կարողանայ գալ այստեղ, որպէս իւր ոստայնը կամ ամառանոցը, նրա աստիճանաւորների դասը և խորհրդականները առատապէո կօգտուեն այս երկրի անհուն քարիքից, որքան որ ցանկան:

— Ոչ, խաւարածին, ոչ, երբէք չեմ կարող այս երկրում մնալ, ես էլ չեմ մնալ, առաց Բողդիխանածինը: Եթէ ես զգացումներիս և ջղերիս դէմ կռուեմ, ստիւգուեմ մնալ, գուցէ ծիւրութիւնը հետ գայ նոյնպէս իմ թոքերս, ես էլ հալումաշի ենթարկուեմ, ինձ էլ չի կարող օգնել այս երկրի օդն ու ջուրը, կտթն ու մեղրը:

Մանաւանդ ես զաւակիցս չեմ կարող անջատուել, երկանյին պատգամներն ինձ պարտաւորացնում են միշտ Բողդիխանի շուրջը պտտել և հսկել Առանց ինձ նրա մշտագարուն ժառանգութիւնը կարող է դժոխքի փոշի խարկուել և կործանուել:

—Ես ձեր սուրբ կամքին հակառակելու, փաստերդ հերքելու ոչ կոչումն ունեմ, ոչ էլ հնարաւորութիւնը: Նրանք այնպէս նուիրական, այնքան արդար են, որքան արեւի պարզ լոյսը Բայց Բողդիխանի կեանքի փրկութիւը, ցեղի յարատեսութիւնը, այս երկրի բերագով ձեր զաւակի առողջութիւնը ապահովելու անհրաժեշտութիւնը, պետութիւնը ճոխացնելու, զօրքը զօրացնելու և չինական ազգաբնակութեան արիւնը թարմացնելու, ոսկօրը վերակենդացնելու հարցը ինձ պարտաւորացնում է, որ ձեզ թախանձեմ, մնալ միասմանակ, կարևորագոյն գործը կատարել, ապագան ապահովել և ապա յաղթանակով, ուրախ սրտով դառնալ յայրաքաղաք, վիշապի անթիւ չսորհները պիտի վերակենդացնէ, պիտի վերածնեցնէ նաև ձեր զաւակին, ապա աւագանուն ու զօրքին, որոնց կեանըը թունառուած է, արիւնները ապականուած, ջղերը քայլայուած և ոսկօրները փթած: Զեղնից է կախուած, ով Բողդիխանածին, կամ ձեր անձը վտանգի ենթարկելով փրկել ձեր զաւակը ու նրա սեղանի փշրանքով ապրողների վահմակը, և կամ անձերիդ ապահովութեան և հանգստութեան համար վտանգի ենթարկել Բողդիխանին և նրա երկրպագուներին: Շատ պարզ է և դուք էլ համոզուած էք, որ եթէ հեռանք, վիշապը պիտի վիրաւորուի, անարդանք համարէ ձեր ընթացքը, դուցէ և վրէմն էլ լուծէ: Այժմ վճռեցէք, ինչպէս որ թելադրէ ձեր առողջ միտքը:

—Ո՞վ դժոխային ճիւաղ, այս ի՞նչ մեքենաներ լարեցիր, այս ի՞նչ թակարդ գլորեցիր ինձ: Ոչ կարող եմ դուրս դալ, ոչ էլ ոյժ ունեմ տոկալու, կեանքդ կը թու-

Կաւորեմ, եթէ անմիջապէս հնարք չես գտնիլ ինձ վիշապի ճիրաններից փրկելու:

— Եռտողվ ձեր ոտքերի տակ կառնէք վիշապին, եթէ հետեւիք խորհուրդներիս Մի քիչ համբերութիւն, մի քիչ խոհեմութիւն, մի քիչ ժամանութիւն... և մի քիչ էլ խորամտութիւն...

— Ոչ, խաւարածին, ոչ, հրեշի ծնունդ, ես իմ նախակին վիճակս եմ ցանկանում, իմ անրիծ սիրտս ինձ դարձրու...

— Ուրեմն ինչի ինձ լսեցիք, ինչի բերիք ձեր որդին առողջացրիք այս երկրում եթէ էլ չեք մտածում նրա ապագան ապահովելու, վեր կացէք, գնացէք, էլ ես մեղք չունիմ, եթէ այս ձորերից դուրս չեկած, վիշապի վրէժխնդրութեան զոհ դառնաք: Իմ դեղս օգնեց, բուժուեց բողդիխանը, մնացորդի մասին ովկ իրաւունք ունի ինձ մեղադրելու:

— Ոչ, բողդիխանածին, ասայ մի մանդարին, այլ ես ուշ է, մենք չը պէտք է մտնէինք այս երկիրը, իսկ այժմ ձեռքից թողնել անարդանք և մեծ անպատճե թիւն է: Մանաւանդ որ հեռանալը վտանդ էլ է մեղ սպառնում: Մենք բորդիխանի հետ կերթանք, իսկ դուք չելլէն բժշկի հետ կը մնաք, մինչև երկիրը կատարելապէս տիրելը և ժողովուրդը հպատակեցնելը:

— Ես ձեզ խօսք եմ տալիս, որ դեռ դուք մայրաքաղաք չը հասած, վիշապից և նրա լեռնականներից հպատակութեան խոստում կորզեմ:

— Պէտք է լսել բժշկին, ձայն տուին նախարարները և նրանց կարաւանը պատրաստուեց ճանապարհ ընկանելու: Հետևեալ առաւօտ թողդիխանը և նախարարները ներկայացան Վիշապին, շնորհակալութիւն յայտնեցին և հրաժեշտի իրաւունք ստանալով, վերադաշտ իրենց երկիրը, իսկ բժիշկը, բողդիխանածինը, սորա նաժիշտները, սենեկապանուհիները, ծառաներն ու խորհրդականները մնացին լեռներում իրենց վրանների տակ:

ՀԵՂԵՆ բժիշկը արդէն սկսել էր կառավարել այս լեռներում և Բողդիխանածինը ամեն քայլափոխը կատարում էր սրա խորհրդով։

—ՎԵհափառ, ասաց մի քանի օր յետոյ Բողդիխանածինը վիշապին, ես այնպէս կապուեցի ձեր երկրին օդին ու ջրին, բարիին ու բերքին, մանաւանդ ձեր սպասին, որ Էլ չեմ կարողանում հրաժեշտ խնդրել և ձեր աչքից հեռանալ։ Այնպէս կաշկանդուեցի ձեր սիրով, որ առանց ձեր ներկայութեան ուրիշ տեղ ապրել չեմ կարող։ Բայց անտանելի է ինձ համար վրանների կեանքը, մանաւանդ որ շուտով ձմեռը կը դայ և ես անսովոր եմ ձեր լեռների դաժան սառնամանիքին։ Խնդրեմ ինձ շնորհ անէք, թոյլ տաք, որ ապարանքներ, պալատներ շինել տամ, բազանիներ և աղօթարաններ կառուցանեմ. որ թէ ինքս հանդիստ ապրեմ և թէ կարողանամ ձեզ էլ հիւրասիրել։

—Երկիրը քո ոտքի տակն է, ժողովուրդն Էլ սպասիդ կանգնած, արա, ինչոր կամենում ես, ասաց վիշապը ծիծաղ դէմքով և հրճուանքով։

—Ասում են, թէ այստեղ զարհուրելի փոթորիկներ է բարձրանում, պէտք է հաստատուն շինութիւններ կառուցանել, որ հողերը նրան չը կործանեն։

—Խնչպէս որ կամենում ես, արգելք չի կարող լինել։

Բժշկի տուած ծրագրի համեմատ մի ահաւոր ամրոց և մէջը տասը հազար սրահանոց ահազին ապարանք շինել տուեց Բողդիխանածինը, Կառլոց, կահաւորեց Զինաստանից բերել տուած բանկազնութեան ուղղերով և կարասիներով, սրահները լքցրեց Զինաստանից հրաւիրած նաժիշտներով, աղախիններով, գուշակով ու զօրականներով։ Ամեն անգամ երբ վիշապը դանդասներ էր լսում իւր բնիկներից իրենց կրած տանջանքների, չարչարանքների մասին, այդ շինութիւնների վրայ բանաւոր ների կրած տառապանքների համար, Բողդիխանածից հարցնում էր, թէ ի՞նչ է կառուցանում.

— Համբերեցէք, բիշէլսպասեցէք, շուտով ապարանաքը վերջանայ, ապա ձեզ կը հրավիրեմ, կը հիւրասիրեմ, ասելով խօսքի. թելը կորցնում էր Բողդիխանածինը և մի կերպ հեռանում էր դէպի իւր շինուածքները:

Մի սբանչելի բլրի գագաթի բէօչքը գեռ չը վերջացրած, բժիշկը մի ուրիշ ձորակում շինուելիք ծաղկանոցի հիմերն էր փորել տալիս, մի գետի վրայ կամուրջ էր կապել տալիս. մի այլի ափերն ամրացնում, այնպէս որ վիշապի հարազատներին, երկրի բնիկներին առաւօտից մինչև երեկոն աշխատեցնում էին այդ անվերջ հիւրածքների վրայ. Եւ այս շինուածների աւարտումը տարիներ տեսեց:

Խեղճ մշակները հանքերում բար էին կտրում, կոսկում, մաքրում, սրբատաշում և թիկունքով բարձրացնում էին հանքերից լեռների լանջերը և այնտեղից շինութեան գլխին մի քանի հարիւր ոտք սանդուխներ բարձրանալով: Զինացի վարպետները կանգնած հրամայում էին, իսկ բնիկ խեղճ ժողովուրդը մտրակի երկիւղից սոսկացած բանում էին առաւօտից մինչև արևի մայր մտնելը: Այս թշուառներն էին կիրը վառում, պատրաստում, աւաղը խոր խոր ձորերից շալակով կրում շինութեան մօտ, անտառից ատաղձ էին կտրում, ձեռում, շինում, յղկում, կերտում և ներկում: Ամենքն անմռունչ, անտրտունչ վաղում էին դործի, բրտնաթոր և վաստակած, շնչասպառ և ուշակորոյս, կատարում էին լրիւ բոլոր պատուէրները: Որքան քարհաններ մնում էին իշած հանքերի փլատակներում, որքան փայտահատներ ճղմում էին կուսական անտառներից կտրած և գլորած գերանների տակ: Քանի՞ քանի՞ մարդկանց հեղեղն է տարել, ջրից աւազ հանելիս, բանի՞ բանի՞ մշակներ խեղճուել էին կիրը հնոցից դուրս քաշելիս: Այս բոլորը տեսնում էր, լսում էր, զգում էր վիշապը, բայց Բողդիխանածինի սիրուն, հարազատների կրթութեան և զար-

գացման համար, միշտ համբերատար ներող աչքով էր դիտում, մոռանում և մոռացնել էր տալիս, հաւատացած լինելով, որ այդ բոլոր չարիքները պատահում էին անդգուշութիւնից և յորդորում էր լուսթեան տալ և խսպառ մոռանալ:

Իսկ Բողդիխանածնի ծառայողները, սպասաւորներն ու վերակացաները օրից օր աւելացնում էին թշուառ լեռնականների բեռը, հետզհետէ հարկեր ու տուրքեր էին սահմանում և ապրուստը դժուարացնում։ Բողդիխանածնի սպասաւորների կերակորի համար ամեն մի բնիկ պարտաւոր էր օրական մի մի ձու, մի մի բաժակ կաթ, մի մի նկանակ և մի մի ճուտ մատակարարել։ Կանայք պիտի նրանց համար բաճկոն ու գուլպա հիւսէին, պառաւները լուսացները կատարէին, մի խօսքով առաւօտից մինչև իրիկոն անդադրում պիտի աշխատէին, որ գուհացնէին այդ ձրիակեր հիւրերին։ Դեռ այս հերեք չէ, ուժեղ տղամարդիկ ստիպուած էին այդ անկոչների պատգարակները ուսերին դրած առաւօտից մինչև իրիկոն վազել այս ձորից այն սարը, այս բարձրաւանդակից այն բլազմը։ Աներես հիւրերը այդ բոլորից յետոյ, դարձեալ աջ ու ձախ մտրակում էին, անպայման երկրպագութիւն էին պահանջում բնիկներից։

Վիշապը նկատում էր, բայց այնպէս էր դիւթուել, որ անդպայտել էր, իսկ ձրիակերները այնպէս էին լը քացել, ընդդիմութիւն չը նկատելով այնպէս էին համարձակուել, որ օրից օր դաժանանում էին։

Բողդիխանածինը խաւարածինը բժշկի խորհրդով ամեն տարի մի քանի անգամ դնում էր մայրաքաղաք և վերադառնում։ Ամեն տարի Բողդիխանը հաղարաւոր խնկարկուներով գալիս էր ամարանոց, թարմանում և երկրի հրաշալի բերքերը, բաղցրահամ որսերը, անսման գործուածքները, ճոխ հարստութիւնը, բովերի ար

ծաթն ու ոսկին, հանքերի շողակն աւ յակինթը ժողովում տանում էր արքունիք՝ Զինաստան։

Թէև վիշապն էր այդ երկրի տէրը, թէև վիշապին էին երկրպագում բնիկները, թէև նա էր իշխում այդ լեռներում, բայց կարծես արդէն ընկճուած հպատակ, վիճակ լինէր նրա պետութիւնը և Զինացիները նրանց հետ վարւում էին իբրև իրենց ստրուկների հետ, Եւ վիշապը դարձեալ ուշադրութիւն չէր էլ դարձնում, քանի որ սիրոյ հմայքով նրան հրապուրել, կուրացրել, թըմ-րեցրել էր Բողդիխանածինը։

Բողդիխանածինը ոչ միայն ձեւական խնդիրներով տիրել էր վիշապի լեռները, բարձրաւանդակները, ձո-րերն ու հովիտները, ոչ միայն իւրացրել էր նրա երախ-քից բղխած քերքն ու բարիքը, բովս ու անտառը, այլ այնքան էր համարձակուել, որ նրան՝ վիշապին էլ հրա-մաններ էր տալիս Եւ սիրոյ քօղը այնպէս էր պատել վիշապի աչքերին, որ նա ոչ տեսնում էր ժողովրդի տա-ռապանքը, ոչ լսում էր նրա ողբն ու կոծը, ոչ զգում էր, թէ իւր քիթը սանձել էր տուել Բողդիխանածինը և սորա եղանակով պարում էր արջի նման։

Բողդիխանածինը այսպէս վիշապին գերելուց յետոյ նրա իշխանութիւնը իւրացնելուց չը բաւականացած, մտածում էր մի կերպ բոլորովին ազատուել նրան քծնե-լուց, սիրաբանելուց և անվերջ կեղծելուց։ Խաւարածիւ-նը, որ արդէն աւելի քան խորհրդականի և մտերմի դեր էր կատարում Բողդիխանածնի մօտ, իւր տիրուհու նպա-տակը իրագործելու համար, խորհուրդ տուեց, որ վեր-ջինը վիշապին խնդրէ, աղերսէ, թողնել ամպերի և լեռ-ների բարձունքը, իջնել բնակուիլ նոր շինել տուած ա-պարանքը։

—Վեհափառ, ասաց Բողդիխանածինը դուրս գա-լով վիշապի առաջ, աղերսում եմ, որ ձեր խոստման-համեմատ, բարեհաճէք գալ պալատ, որը ձեզ համար-

յատկապէս պատրաստել եմ տուել եօթը տարուան ըն-
թացքում։ Աղաչում եմ ձեզ, արդէն եօթերորդ տարին
լրացել է և գուք փոխելու էք ձեր շապիկը, հաճեցէք
լսել ձեր աղախնի խնդիրը, թողէք վիշապային շապիկը։
հադէք բողդիխանական խալաթ, որպէսզի սենեկապա-
նուհիներս և նաժիշտներս չը սոսկան ձեր տեսքից։

Վիշապը ինչպէս միշտ զիջել, Բողդիխանածնի և
ոչ մի խնդիրը չէր մերժել, ընդունեց և այս առաջարկը։
Նա հանուեց վիշապի շապկից, գցեց ուսերին իշխանա-
կան ծիրանի, եկաւ և մեծ հանդիսով մտաւ պատրաս-
տուած ապարանքը, որտեղ նրան ընդունելու համար
մեծ պատրաստութիւն էր տեսնուած։ Այս հանդիսի
համար Զինաստանից հրաւիրուած էին շատ մանդա-
րիններ, խորհրդականներ, փոխարքաներ և նախարար-
ներ, նոյն իսկ Բողդիխանը, որոնք բազմադունդ զօրքե-
րով, նուագածուներով, երդիչներով ու կաքաւիչներով
ընդառաջ գնացին վիշապին, վերցրին նրան իրենց ու-
սերին պատգարակով, իջեցրին լեռնադադաթից և պա-
լատ հացնելուց յետոյ, սկսան մեծ տօն կատարել, ու-
րախութեան երգերով օրն անցկացնել։ Ամբողջ լեռները
դղրդում էին ցնծութեան աղաղակներից, ձորերն ու
ապառաժները արձագանք էին տալիս երաժշտութեան
խմբերին, ժողովուրդը ողեզմայլած աղաղակներ. էր բարձ-
րացնում, երգում էր, կաքաւում թռչկոտելով։

Այս ուրախ ժամերին միայն խաւարածին բժիշկն
ու Բողդիխանածինը սաստիկ մտատանջութեան մէջ էին։
Հէլլէն բժշկին դառը մտքերը և տիսուր պատկերները
այնպէս էին պաշարել, որ իւր տիրուհիի ոչ մի հարցը
չէր կարողանում ըմբռնել և պատասխանել։ Բողդիխա-
նածինը աւելի էր շփոթուել նկատելով իւր խորհրդա-
կանի ցրուած վիճակը։ Ինչպիսի՞ միջոցների չը դիմեց
այս զոյտը, որ ցրուեն իրենց հոգին պատող տիրութեան
քօղը, ծպտուեն ուրախութեան դիմակով, հնար չը գը-

տան, կեղծկքները իրենք իրենց մատնում էին. Քանի քանի անգամ առանձնանալով իրար յորդոր և խրախոյս կարդացին, որպէս զի շրջապատողներից չը նկատուեն, բայց դժոխային կասկածներին ու տարրակուսանկքները չանհետացան:

Գիշերը, մէջ գիշերին հետևող սոսկալի խաւարի մէջ, երբ ամբողջ լեռներին տիրել էր հանդստութիւնը և խաղաղութիւնը, երբ դադարել էին զրոյցն ու ծիծառը, սրինդն ու թմբուկները, լուսել էին երգիչների և գուսանների լեզունները, մրափում էին պարողներն ու կաքաւիչները և նիրհում էր աղգաբնակութիւնն ու հիւրեկած բազմութիւնը, վիշապը տարածուած նրա համար պատրաստուած բազմոցի վրայ, մտածում էր այն բիւրաւոր անցքերի մասին, որոնք դարերի ընթացքում եկել, սահել, անցել էին իւր աշքերի առաջից.

Այդ մոայլ մտքերը նրան ետ տարին դէպի հին հին դարերը, ներկայացան նրան իրեն վրայ յարձակուող հսկանները, քաջերը, գիւցազներն ու գեերը, նրանց նենգութիւնները, խորամանկութիւնները, պարտութիւնն ու կործանումը։ Այս ցանկալի անցքերին յաջորդող այս հըրճուալի վայրկեանները այնքան նրան յուղեցին, որ նա տարածուած տեղը թմրեց, անզգայ մրափեց։

Այդ բոպէին սպասողները երկու հակառակ դռներից ներս մտան և թաթերի վրայ զգուշութեամբ քայլով, մօտեցան վիշապին խաւարածինն ու Բողդիխանածինը և սկսեցին թախանձել. որ բարձրանայ, ծիւրանին ու վերարկուն հանի, բէհէզի սպիտակ խալաթն հագնի, ածելուի և ապա անկողին մտնի քնելու. թէե վրդովուեց, բայց վիշապը Բողդիխանածինի այս առաջարկն էլ չը մերժեց, հագաւնիանց ներկայացրած ձիւնի նման սպիտակեղէնները և թոյլ տուեց, որ խաւարածինը սափրէ իւր կղակն ու վիղը։ Մինչ Հէլլէն բժիշկը մեծ ճարտարութեամբ սրում էր ածելին և վարսում-

երբէք երկաթ-պողպատ չը տեսած վարսերը, յոդնած վիշապը աշքերը փակած ննջում էր բաղմոցին նատած։ Բողդիխանածինը նշաններ էր տալիս, բայց խաւարածինը մեքենաբար վարսում էր Վերջապէս Հէլլէն բժիշկը առ ոիթից օգտուելով ածելին ուժեղ կերպով բաշեց վիշապի կոկորդի վրայից, կտրեց զղերն ու մկանները մինչև ողնաշարը, որտեղից հեղեղի նման սկսեց հոսել կարմիր արիւնը, Բողդիխանածինը ցանկալով շուտով վերջ տալ վիշապի կեանքին, իւղած թոկը գցեց նրա գլուխը և սկսեց դէպի ետ բաշել։

Յանկարծ կտրուած կոկորդից եօթը վիշապի գլուխներ դուրս ցցուեցին, որոնց երախից ցայտած ծծումըն ու կրակը, կուպըն ու նաւթը անմիջապէս այրեց դաւճաններին։ Բոլոր պաշտօնականները, զինւորներն ու զօրականները, սենեկապաններն ու նաժիշտները մի ժամի ընթացքում մոխիր դարձան, նոյն գիշերը որբան որ, Զինացի հիւրընկալածներ կային, միենոյն ժամում հրին ու կուպըին ճարակ դարձան մի մարդ էլ չազատուեց, որ գոնէ բօթը Զինաստան հասցնէր։

Վիշապը սթափւեց, զղաց իւր ցոյց տւած անչափ հիւրասիրութիւնից ու մարդասիրութիւնից, թողեց տասը հազար սրահնոց ապարանքը, ետ դարձաւ դէպի իւր լիոների դագաթը, բազմեց իւր դարեսը գահոյքի վրա շարունակելու իշխանութիւնը, ժողովորդը ազատուեց Զինական գորհուրելի տանջանքներից, անհաշիւ գործերից, տուրքերից ու հարկերից, աշխատեց իւր վաստակը ծախսել իր մանր ու խոշորի վրայ։

Իսկ Գաւո Գիտունները, որոնց սիրտը խոցուտել էր Բողդիխանածինը խաւարածնի մեքենայագործութիւններով, այդ հրէշային էգի չարագործութիւններից և անգթութիւններից զգուած, անշատուեցան իրենց կանանցից, կուսակրօնութեան ուխտ արին, մտան այն տասը հազար սրահնոց ապարանքը մշտնջենական օրհ-

Ներգութիւններ երգելու, ծնծղաներով, փողերով ու
սրինգներով անվերջ նուագելով՝ արթուն և զգաստ պա-
հելու վիշապին, որպէս զի անխափան հսկէ իրենց երկ-
րի սահմաններին։ Այն պալատը, որը դաւադիրները չա-
րագործութիւնները կատարելու վայր էին սահմանել,
այս կուսակրօնները մշտնջենաւոր աղօթարանի վերածե-
ցին, որպէս զի այդ տեղից հերթով դիտեն երկրի ան-
ցուգարձը, չը թողնեն, որ մի ուրիշ կին մօտենայ
վիշապին, նրան հրապուրելով մեղկացնէ, թմրեցնէ և
պատճառ դառնայ ժողովրդի սարկանալուն և չարաչար
հարկերի ու տուգանքների տակ տանջուելուն։ Այդ կու-
սակրօնները վիշապին տեղապահ ընտրեցին իրենց միջից
Դալայ-Լամային, որը որևէ է օտարականի թոյլ չի տա-
լիս մինչեւ անդամ ուխտի այցելութիւն կատարելու
դէպի իւր իշխանութեան յանձնուած սարահարթը գըտ-
նուած սրբութիւնները...»

ԱՏՐՊԵՏ